

«Հայոց պետականության անցյալն ու ներկան» գիտաժողովի հարգելի՛ մասնակիցներ, հյուրեր, երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ողջունում եմ բոլորիդ անկախ Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտում:

Հատկանշական է, որ գիտաժողովն անցկացվում է հենց Արցախի հինավուրց հողում և նվիրված է Հայաստանի առաջին հանրապետության 100 և արցախյան շարժման 30-ամյակներին՝ հայկական երկու պետությունների պատմության կարևորագույն այն երկու իրադարձություններին, որոնք հայ ժողովրդի անկախության, ազատ և ինքնիշխան հայրենիքի համար պայքարի ամենամնայուն ձեռքբերումներն են:

Հարգելի՛ ներկաներ, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը սիրով է ստանձնել «Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում» հասարակական կազմակերպության կողմից կազմակերպված այս գիտաժողովին աջակցելու գործը: Լիահույս եմ, որ այն կձառայի իր նպատակին, այն է՝ ոչ միայն Հայաստանում, այլև հատկապես միջազգայնորեն հանրայնացնել վերջին հարյուրամյակի ընթացքում Հայաստանի Հանրապետության՝ որպես անկախ և անսասան պետականություն ունեցող երկրի ձեռքբերումները՝ այդ համատեքստում ներառելով նաև Արցախի Հանրապետության անկախության նվաճման ճանապարհին հաղթահարած դժվարությունները: Կարծում եմ՝ գիտաժողովը կօգնի նաև վեր հանել բազմաթիվ հիմնախնդիրներ, ինչու ոչ՝ նաև նախանշել հետագա անելիքները:

Կրկին ողջունում և բարի երթ եմ մաղթում գիտաժողովի բոլոր մասնակիցներին:

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարար՝

Լևոն Վահրադյան